

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիտ համար	12 գր.
սարեկիսի վեցամսայ	7
Արսասահմանի համար սարեկիսի	15 գր.
վեցամսայ	8
Արսասահմանի սարեկիսի	3 սգ.
վեցամսայ	1.30

Երանուցումն տողը սուրբին երեսին համար 40 սանթիլ իսկ վերջին երեսին համար 20 սանթիլ է. հրեֆ.և ս էլի սանթիլներու համար 20 0/0 զեղը կը լայն:

Վառիայի համար ձեռք 10 սանթիլ է

# ՇԱՐՋՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳ՝ՅԻՆ. ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏ ԲԱԿՈՒԻ ԶՈՐԵՔԵՄԵՐ ԵՒ ՇԱՐՋՈՒՄ ՕՐԵՐԸ

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ զո կեղ խմբագրութեան հասցեից

Редакция на вѣстанкъ "Шаржумъ" Варна

Redaction du journal "Charjourn" Varna (Bulgarie)

Պուշկարիտ համար ձեռք

15 ՍԱՆԹԻՄ

Արսասահմանի համար ձեռք

20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք և ս ջեկ տրուի

ՇՈՒՄԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄԸ ԲԱԺՆԳԻՆԸ ՊԵՏԻ Ե ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԷ

## Ս. ԳՍՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԷ ԵՐԱՇ. ԽԱՆՈՐԴԱԿԱՆ ՍՕՖԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱԶԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ

Տոմսակ գնել փոփոքողները կրնան իրեն գիմել՝ Զար-Պորիս փողոց Վառնա

## ԴԱՇՆԱԿՅԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Պարիզ, 3 Մարտ 1906

Աւրախ եմ որ այս անգամ արձանագրել է վիճակվում քաջալերող և ոգեւորիչ փաստ մեր կուսակցութեան կեանքից: Այդ փաստը ներկայանում է մեզ կովկասահայերի քաջարի գիմադրութիւնը թաթարներին, որի միջոցին դաշնակցական յայտնի հրոսպետները, զինուորները և մարմինները ժողովրդի հետ միացած իրօք փառաւոր գեր են կատարել միայնգամայն խորտակելով թաթար խուժանի հայերին թալանելու և կոտորելու հրահրված խորթակը:

Այս օրերում Պարիզով անցաւ կովկասում ապրող դաշնակցական յայտնի գործիչներին մին, Գ... որից և իմացայ թէ դաշնակցականները բացարձակօրէն սարսափ են տարածել թաթարների վրայ և ակնածանք ստեղծել ուս զինուորների և սպանների մէջ: Մանրամասնութիւնները շատ ոգեւորիչ են. և իրողութիւն է որ թաթարները այլևս համոզված են թէ՛ կովկասի հայերին ջարդելը այնքան էլ գիւրին չէ և իրենց շատ սուղի է նստում, նոյն իսկ կառավարութեան անտարբեր հանդիսականի գիրք բռնած միջոցին:

Յարգանք կովկասի հայութեան քաջ մասին, և այն գործիչներին ու կուսակցներին որոնք կարողացան կացութիւնը ըմբռնել և գրութեան տէրը հանդիսանալ իր ուժերը ներածի շափով:

Սակայն վտանգը գեա բոլորո-

վին չէ անցել. մտանում է թաթարների սարբը ամարանոց գնալու ժամանակը. թէ հայերը և թաթարները վախենում են նոր յարձակումներից և ընդհարումներից, այդ պատճառով երկու կողմից էլ եռանդուն պատրաստութեան մէջ են: Ինչպէս գիտէք կառավարութիւնն էլ է վախենում այդ նախագուշակելի ընդհարումներից և գոնէ բաւերոյթին աշխատում առջեւը առնել, այդ նպատակով արդէն թիֆլիզում փոխարքայի նախագահութեամբ հայ և թուրք ներկայացուցիչների մի համագումարման բացումը տեղի ունեցաւ:

Ամերիկայից հաղորդում են որ նախագահ Բուզդէլտ հայկական խնդրի առթիւ իրեն գիմող ականաւոր եւրոպացիներից մէկին մտաւորապէս հետեւեալ պատասխանն է տուել. — Մենք առանձին ոչինչ չենք կարող անել հայերի համար բայց եթէ Բերլինի դաշնագրութիւնը ստորագրող պետութիւններից մին Լահէի ժողովում յանձն առնի հայկական հարցը բարձրացնել, այն ժամանակ Միացեալ Նահանգների ներկայացուցիչը պաշտպան կը հանդիսանայ:

Այժմ խնդիր է արդեօք պէտք է գտնվի՞ եւրոպական մի մեծ պետութիւն որ յանձն առնի Լահէի ժողովում նախաձեռնարկ լինել հայկական խնդիրը վերանորոգելու:

Ի հարկ է այդ տեսակ մի քայլ մենք կարող ենք սպասել միայն Անգլիայից և Թրանսսայից, մանաւանդ հիմա որ այդ երկու պետութիւնների վարչութեան զեկը գտնվում է հայասէր ազատականների ձեռքում: Արդեօք կարող ենք սպասել որ Սուլթանի գրելին կրակ թափող Իրայս և կլեմանսոն քաջութիւնը կունենան իրենց նախատած նախորդ վարչներից տարբեր գիրք բռնել իրենց պաշտօնավարութեան միջոցին:

Սհա այժմ զգացվում է անխոնջ և Բրայսի ու կլեմանսոյի հետ բարեկամական կապերով կապված Լորիսի պակասութիւնը: Մեր կարծիքով փոխանակ Ռոզվէլտին պէրսիւտ, միտինգներ սարքելու և հեռագիրներ գրկելու, որին արդէն դիմել են Եւրոպացիները, շնորհիւ հեռացած գործիչի անխոնջ աշխատանքին, աւելի լաւ կը լինէր միջոցներ ձեռք առնել Անգլիայի և Թրանսսայի ներկայ վարիչներին միջուկ գէպի Հայկական խնդրի պաշտպանութիւնը...:

Ի հարկ է եթէ պետութիւնները իսկ յանձն առնեն մեր խնդրով Լահէի ժողովում զբաղվելու: Դրական մի բան չի ստացվի, այնուամենայնիւ Հայկական խնդրով պաշտօնապէս զբաղվելն էլ մի բան է. մի փոքրիկ, շատ փոքրիկ քայլ գէպի առաջ, մինչեւ որ մեզ համար կարելի լինի աւելի խոշոր բարոյական իրաւունքներով ներկայանալ այդ արիօպագին առանց որի Հայկական խնդիրը երբէք չէ կարող իր լուծումը ստանալ:

ՎԱՐՂՈ

## ՍԼԱՑԻԿ ԵՐՈՒԵՐ

## ԼՕՆՏՈՆԻ ՀԱՅԵՐԸ

Բ.

Ատկէ ամիսներ առաջ, նոյնիսկ պատրիարքարան զրկուելու երաշխաւորութիւն տրուելով հանդերձ, Աէյթուրի տառապող որբերուն համար բացուած հանգանակութեան մը միմիայն 5 ոսկի տուող այդ մարդիկը, այն եւս տասնեակ հազարներու տէր հարուստներու տանեակ գրասենեակները վազվառելէ յետոյ, «սրբազան առաջնորդին» մէկ թեթեւ կոչին վրայ 2-3 հոգի միայն բոլորապէս կարձանապրեն 60 ոսկի, խոտանալով դեռ շատ աւելին եթէ գործը իրականութեան շաւղին մէջ մտնէ... Թէ ինչպէս չը յաջողեցան, ասի օրինակելի եւ զեղարիչ դաս մըն է՝ որմէ պարտաւոր են օգտուիլ

բոլոր անոնք՝ որոնք հայ չոջին կամ քը, իր ոսկին ուժով, անդրդուելի եւ անխորտակելի կը նկատեն, Բոլորքները բարձրացան նոյն վայրկեանին եւ տեսնելու էր ջոջերուն փոփոքած շրթները եւ փոփոխակի դեղնոց ու կարմրոց դէմքերը, որոնց դէմ համարձակած էին խօսիլ:

— Ա՛ս, ա՛ս, ասո՛նք մեր վրայ քէ հեռա պիտի ըլլան, ասոնք պիտի կառավարեն մեր քեսէն, կորոտանին, բայց, որտեղ անցաւ ու ծրագիրն ալ միասին վիճեցաւ: Սրդէն ունեցած շունեցածնիս եկեղեցի է. բաւական է եղածը. թող հատ մըն ալ պակաս ըլլայ:

Ինչ կորսնցուց եւ ի՞նչ տուժեց Լօնտոնի փոքրաթիւ հայութիւնը եկեղեցիի չգոյութեանն Ոչինչ, բացարձակապէս ոչինչ, — Բարոյական կորուստ. կրնամ ըսել որ Լօնտոն ապրող երիտասարդներու բարոյականը շատ աւելի բարձր է քան ուրիշ խոշոր ու պերճ եկեղեցիներով ապրող գաղութիւնը, իսկ նիւթական տեսակետով չհանցաւ շատ բան: Չունի հոգը տէրտէր պահելու, չունի հոգը տիրացու կերակրելու չունի հոգը խաչ մոմ, սքեմ, եւ այլն գնելու...:

Եւ այսօր. Հ. Բ. Ընկերութեան ղեկավար տիրացու — նախագահ — հիւնաղիբը, Գանատայի մէկ մենիկ անկիւնը, հոգեաւանջ ճգնաժամներ կանցնէ. իր սպնդազով գանգին յըզացումին ասանկ ահոնի ջախջախման վրայ խոկալով...:

Բայց, Ռուսահայոց ըսածին՝ ինչ արած — սի է թրանսիթ կլօրիա մօնտի!

Հակառակ յօդուածիս երկարութեան, չը պիտի կրնամ զանց առնել քանի մը խօսք ընելէ նաեւ տեղական հայ ընկերութեան մը մասին որ բաւականաչափ մեծ դեր խաղացած է գաղութի անգամներուն մէջ:

Այդ ընկերութիւնը առաջին անգամ — կարծեմ 96-97ի ատենները՝ երբ գաղութը բաւական մեծ թիւ մը կը կազմէր — հիմնուած է Ալօնտոնի Հայ Գործաւորներու եւ Ուսանողաց Ընկերութիւն» անուամբ, բայց, մինչեւ օրս քանի մը անուններ փոխած ու նորէն մկրտուած: Ինչպէս նախասահմանեալ օրէնքն է հայ ընկերութիւններու, կը ծագի վէճ մը, ուր ոմանք կը պահանջեն վերացումը Ռուսանողացին քանի որ բոլորն ալ աշխատաւոր մարդիկ են եւ մէջերին ուսանող չը կայ: Բանակուելը կը վերջանայ բաժանումով: Անոնք որ ժամանակին տիրացու էին եւ այն

ատեն ալ գրագիր, կանցնին Ուսանողացին, իսկ համեստները կը մնան իրենց վիճակին: Գանի մը ամիս վերջ զգացուեցաւ «Միութեան» պէտքը, որովհետեւ եկածը տուն էր ու հարկ էր հանդէս մը տալ: Ուստի միացան՝ որպէս զի արգելք չըլլան իրարու եւ աւելի հզօր ուժով գործեն: Այդ առթիւ պատ. Թումանեան ըրած է «բանաստեղծութիւն» մը, միութեան վրայ, որուն ինքն իսկ այնքան հաւանեցաւ որ չը կրցաւ զըսպել ինքզինքը ատոր գէթ ու է գիւմէն «Պատանդի թանկագին էջերուն վրայ շողացնել»:

Մինչեւ այսօր միութիւնը մնացած է անասան «Լոնտօնի Հայոց Միացեալ Ընկերութիւն» անուան տակ, բայց, որպիսի կազմ ու արգահատելի կացութեան մէջ Այսուհանդերձ, Բարիքի «Այլստատեորացի» նման 2-3 ամիսը անգամ մը չընեն իր գումարումները, այլ շարժէ շարժի, ուր եկողները լեզուին բռնած չեն գար, այլ ազատ-համարձակ խօսելու ինչ նիւթ որ ընտրեն: Ժամանակ մը վարչութեան անդամները շոջեր էին, որոնք քանակաւ չունէին պէս կը դարձնէին, բայց հեղ մը երբ կը փորձէին նոր անպարտութիւնով մը իրենց սիրելի բարեկամ Թումանեանին պատիւը պահելու ձգտումներ ընել, երկու օր վերջ տապալուեցան եւ անհետացան...

Բաղդատամբ միութիւննց եկեղեցիով օժտուած Բարիքի հայ գաղութին, Լոնտօն շատ աւելի երջանիկ էր ատեն մը գրադարանով եւ ընթերցարանով մըն ալ, սակայն, հայութեան օրըստօրէական պակասմը գործերը դանդաղեցուց ու մեռուց:

Միացեալ Ընկերութեան լուսագոյն եւ յիշատակելի գործերէն մէկը եղած է հայաձանօթ Լինչի (այժմ նոր ազատական բարձրագոյն անդամ) նախագահութեամբ տրուած Միութեան հանդէս մը, ուր նուիրուեցաւ Լոնտօնի հայ գաղութին անուամբ արծաթ թանաքաման եւ գրիչ մը սոյն պաշտելի հայասէրին:

Սրահը, որ վարձուած էր այդ երկուսի, գրեթէ Լոնտօնի է՛ն հոյակապն էր եւ քանի մը ժամուան համար միայն վարչութիւնը վճարած էր աւելի քան 200 Փրանք:

Այս պատիւը մասամբ Լինչի էր եւ մասամբ անգլիական օրէրէզի զըժուարին բնութիւն վրայ փայլող հայ օրորողի մը—Օր. Ալեքսիա Պասեան—որուն ամէն երեկոյ «Լոնտօնի Բէյլի-բըն» առաջնակարգ Միութեան—Հոյին մէջ խլած դափնիներն ու ծափերը բնաւ պատճառ մը չէին եղած երկտող հրաւէր մը անմիջական յօժարութեամբ ընդունելու ու ընդհանուր հիացումի արժանացած մէձձձօսօբբանօ զիլ ձայնը հոն եւս թնթացնել:

Յոգուածիս սկիզբը կը յայտնէի թէ Լոնտօն հայ իգական սեռը շատ հազուադէպ էր: Սա ամենատեսակաւի կերպով զգալի կըլլար երբ խնդիրը դառնար երգելու, արտասանելու եւ այլնի շուրջը: Բայց զբաւած էին ատոր միջոցն ալ.—կերպէին անգլիացի կամ այլազգի ազգիկներ ու տիկիներ:—Մանթի «Հովիկը», Պէշկիթաչեանի «Մոստուժը», Չոպանեանի «Օրորը», քառաձայն «Միժեռնակ», «Էմ սիրելի զովակունք» եւ դեռ շատեր, բոլորը հայ խօսքերով երգուած են օտարազգի շրթերէ Լոնտօն:

Ասոնք որ կարճաճարեմ հոս, թէպէտեւ հիմա ստացօնք մէջ թաղուած յիշատակներ են Լոնտօնցիներուն համար, բայց, ուրիշներուն տեսակ մը օրինակ տալու նպատակով է որ կը քրքրեմ ու կը վերանորոգեմ զանոնք:

Այսօր Լոնտօն գրեթէ հայութիւն չկայ, ճամբորդներու թիւը մեծ է, սակայն ատոնց բոլորին խնայ—բը նազաւածն է Ամերիկան, առաջին բոլորեալստ՝ աշխարհը: Առաջին պատեհութիւնը որ ներկայացաւ, կը թռչին, հո՛ն, հո՛ն, հո՛ն, Ամերիկա...

Հարցո՛ւր Լոնտօնի եկող իրաքանչիւր գաւառացի հայուն ի՞նչ ընելը—  
—Ամերիկա՛, աղբէր, Ամերիկա՛...  
Պօլ փարա կայ կասին հոն...  
Աւ կերթան

Եւ, ո՞վ գիտէ թերեւս լաւագոյն վայրն է որ գաղթական հայը կընտրէ իրեն: Որովհետեւ, նամանաւանդ Լոնտօնը, շատ հիւրընկալ բնաւորութիւն չունի օտարականներուն հանդէպ եւ լեզուին անտեղեկութեամբ անհամարձակ է անոնքի թափառիլ փողոցները: Իսկ ծանօթ օտարականն ալ կեանքի եւ մահու միջեւ տատամ սիլ՝ եթէ հասարակ աշխատաւոր է, լսելով օրն ի բուն աշխատակից անգլիացիին հոգի գարշեցնող յանկերգը.—պլա սի՛ ֆօր էյն ըր... կամ տըրթի ճի՛ու (սղոտտ հրեայ, հոգ չէ թէ չինաստանցի ըլլաս դու):

Գանի Լոնտօնի վրայ մասնաւորած ենք խօսքերնիս կարծեմ աւելորդ չըլլար յիշել նաեւ հետեւեալը.—ներկայ տարուան յունվարէն սկսեալ Լոնտօն, ինչպէս եւ Անգլիոյ բոլոր կողմերը, մուտքը սարսափելիօրէն դժուարացած է, թերեւս առաւել խիտ քան Ամերիկա: Մտնող պէտք է ունենայ անուագն 5 ոսկի գրպանը (120—150 Փրանք գոնէ) եւ ազատ ըլլայ ու է վարակիչ տիտէ: Գնումները չափազանց խիտ են, Անոնք որ գուրկ են որոշուած քանակ գրամէն, ունին հիւանդութիւն, կը բերեն հետեւին աղտեղութիւն, սահմանուած են վերադարձել անպայման:

Տարակոյտ չկայ թէ թօրական այսպիսի տխար օրէնք մը հնար չէ երկար կենդանի մնայ Ազատական բարձրագոյն թիւն մէջ, քանի որ այդ էլ ի ընս պիլ (օտարականաց օրինակով) ըսուածին է՛ն հզօր հակառակորդն էր Սըր ձէնրի Բէյլի—Պէշկիթաչեան ինքը բայց եւ այնպէս, կը յիշենք այստեղ զգուշութեան համար բոլոր անոնք՝ որոնք կը բաղձան Լոնտօն կամ Լոնտօնի վրայով այլ կողմ անցնիլ:

Ուրեմն այսքանով ալ կը բաւականանանք Լոնտօնի հայութեան մասին:

Մ. ՅՈՒԱԿ

Յ. Գ.—Նոր էի աւարտած Լոնտօնի Հայութեան վրայ այս համառօտ տեսութիւնը՝ հազիւ շաբաթ մը կայ՝ երբ նամակ մը նոյն քաղաքէն կը հաղորդէր Միացեալին մէկ նոր սարքած հանդէսը հայ. Միութեան առթիւ այս տարի, յունվար 20ին:

Մի քանի ակնաւոր հայասէրներ ինչպէս գեր. Մէք—Քօլմ եւ Լինչ որոնք հրաւիրուած են՝ չեն կրցած ներկայ գտնուիլ եւ ներկաներու 150ի մօտ թիւէն 40—50 միայն հայ է եղած:

Իրբեւ ներկայացում տրուած է Ռաֆֆի Սալբիէն հատուած մը—թե

րեւս այն կտորը որ արտասուած է «Վէպիկներու» Բ. հատորին մէջ. Յաջող կամ անյաջող բառերը ներքի չեն, միայն կարելի է րսել որ բան մը ըրած են:—Մայր Հայաստանի դերը կատարեց, կրէ նամակագիրը Օր. Պոյաճեան եւ ոչ թէ Տիկ. Այրի Աննա Ռաֆֆի. ինչպէս ձեր կողմի թերթի մը «սեփական թնթաղիցը կը հաղորդէ: Տարակոյտ չունիմ որ՝ եթէ այդ շատուկին ատանկ գերով բեմ բարձրանալը լսէին՝ եկող 40—50 հայերէն եւ ո՛չ մէկը ներկայ կը գրտնուէր... գիտես անո՛ւշա...»:

Վերջին հատուածը, ի հարկէ, շարք մը ընթերցողները բերանարօց եւ շուարած կը թողու: Ատի բնդ արձակ խնդիր մըն է՝ որու մասին յարմար չէ հոս խօսիլ այս առթիւ, կը թողու մայր ուրիշ պատեհութեան: Սաչափը միայն հոս բնած որ «Այրի Աննա Ռաֆֆի» կոչուածին ինչպէս եւ իր երկու զանկըներուն այդ անուներ կրելը կատարեալ հայհոյանք մըն է նոյնը ստեղծողին մէջ անձին եւ պատկառելի անուան զէմ. ու ասիկա գիտէ ա՛յն Լոնտօնսրնակ հայ:

Մ. Յ.

### ՄՈՒԺԻԿՆԵՐԸ ՑԱՐԻՆ ԴԵՄ

Մուժիկներու հին հաւատքը դէպի ցարերը օրէ օր սկսած է նուազիլ. Ահաւասիկ երկու յառկանչական պարագաներ այդ մասին:

Առաջինը նովկորոտի նահանգին մէկ գիւղին մէջ պատահած է, այսինքն կայսերական բնակավայրէն 100—150 վերստ հեռաւորութեան վրայ միայն:

Սօսիւլ տէմօքրաթ կուսակցութեան ներկայացուցիչներէն մին կը ճառախօսէր գիւղացիներու բազմութեան մը առջեւ: Ու խորհելով որ, դեռ մուժիկից ցարին վրայ ունեցած հաւատքը խախտած ըլլալու չէ, զգոյշ կը վարուէր ու չէր տար նիքօլա Բ.ի անունը:

Իւոյց երբ խօսքը վերջացուց, ձերուսի մը ամբոխէն բաժնուելով մօտեցաւ խօսողին:

— Խնդրեմ, ըսէ, մեզի կը պատմեն թէ ուրիշ երկիրներու մէջ ցարերը ժողովուրդէն կընտրուին. այդ օք իրա՞ւ է ասիկա:

— Այո, ճշմարիտ է, կը պատասխանէ բանախօսը:

— Նաև կըսեն թէ երեք տարուան համար կընտրեն:

— Այո, կայ երկիրներ ուր երեք տարուան համար միայն կընտրեն:

— Մենք, մուժիկներս այ այնպէս կը մտածենք թէ լաւ պիտի ըլլայ որ Ռուսիոյ մէջ ալ ցարերը ընտրուին:

— Իմ կարծիքս ալ այդպէս է, կը փութայ պատասխանել ատեւախօսը:

— Բայց սա տարբերութեամբ որ, մենք, մուժիկներս կը խոր-

հինք թէ երեք տարուան միջոցը շատ երկար է, կը բաւէ միայն մէկ տարուան համար ընտրել...  
— 0!

— Որովհետեւ, երեք տարուան մէջ շափագանց շատ պիտի գողնայ, Մեր սպարօսութեամբ (գիւղին ըստ) երեք տարուան համար կընտրենք, և ահա իր կատարած գողութիւններով ամբողջովին փճացուց մեզի:

Երկրորդ դէպքը հարուային գաւառներէն մէկուն մէջ պատահած է:

Պէշկիթաչեան նաչալիքը գիւղացիներու մէջ կառավարութեան ինչպատ բարեկան կրէր, անոնց բացատրելով ըստ հաճոյս Ռուսիոյ քաղաքական կազմակերպութիւնը հսկողներու 17ի մանիֆեստին համաձայն:

Յանկարծ սմբոխէն ձայն մը բարձրացաւ:

— Իսկ ա՞ն. ան ի՞նչ պիտի ըլլայ, պիտի շարունակէ՞ մնալ:

— Ո՞վ է խօսողը, թող մօտենայ, կըսէ Պէշկիթաչեան: Նաչալիքը՝ երկրասարդ մուժիկ մը բազմութեան կանջատուէր ու կը յառաջանայ դէպի իշխանութեան ներկայացուցիչը ու կը կրկնէ իր հարցումը:

— Իսկ ա՞ն, միշտ պիտի մնա՞յ: Պէշկիթաչեան նաչալիքը որ կը հասկնայ թէ ան ո՞վ է, երկրասարդին հարցումը իբր քրէական յանցանք մը կը նկատէ և կը հրամայէ որ 50 հատ գաւազանի հարուած իջնցնեն:

Հրամանը կը կատարուի:

Մուժիկը ոտքի ելլելով՝ խորունկ համոզումով մը կապալակէ:

— Գիտեմ արդէն, որքան որ ան մնայ, մենք, գիւղացիներս, դեռ շատ գաւազանի հարուածներ պիտի ընդունինք:

(Ք. ԵՕՐՈՐԷԷՆ)

### ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ԵՂՆՈՒ ԱԿԱՆ ԱՐԱՐՔԻՆ, ՀԵՂԻՆԱԿԱՆԵՐՈՒՆ

ԴԱՏԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(Սանգու մէի-էֆքեարուն քաղաք)

Իրեկ տրուեցաւ Ժօրիսի որ օտար թերթերու մէջ կարդացած տեղեկութիւնները պարզապէս քիսախոյրական հրատարակութիւններ էին եւ քանի որ ինք ճշմարտութիւնը կը սիրէր, պէտք էր քննութիւն կատարէր, և քանի որ քննութիւն անաջը հուզէր անուր, բացայայտ էր որ պայթուցիկ նիւթերու հայթայթմամբ գործուած անիծեալ արարքները շարք առաջ կրնային բերել, Ժօրիս ըսաւ որ իրենք թէեւ կը գուշակէին որ շարք տեղի պիտի ունենայ, բայց կը յուսային որ անիկայ վերջինը պիտի ըլլար: Հարցուեցաւ որ յոյսով գործ կը տեսնուի: Ժօրիս պատասխանեց թէ ինք այնպէս կը կարծէր որ շարքին արդիւնքով պիտի յայտ-

նուէր խնդրին էութիւնը, որ մինչեւ այն ատեն չէր պարզուած, և կառայարու թիւնն ալ ասիկա նկատու առնելով, ըստ այնմ պիտի շարժէր:

Հարցուեցաւ թէ օրինաւոր կը նրկատէ՞ր շարժը: Ժօրիս ըսաւ որ շարժը օրինաւոր չտեսներ, այլ իրենք այնպէս կը նկատէին որ շարդիրուն հետեւանքով ձեռք պիտի բերէին իրենց նպատակը Հարցուեցաւ թէ ինք ինչ կապակցութիւն ունէր այս տեղին էեաւ և ինչ յարարիութիւն՝ ժողովուրդին հետ Ժօրիս ըսաւ որ ինք Պօլսոյ եկած է զբարձրահարկու համար, մարդ մեքենայ մը չէ եւ խորհրդածելով եթէ ծառ մըն ալ ըլլայ, կուզէ հասկնալ գիմացիներն ինքնու թիւնը հստակաւ իրեն թէ քանի որ խորտանին մարդ մը ըլլալը կը զգացնէ ինչ պիտի ըսէ Հայերուն համար, որոնք ամէն նպատակներու պէս շնորհիւ վե՛ս, կայսեր, առանց ցեղի և կրօնի խտրութեան կատարեալ հանգստութեամբ և երջանկութեամբ կայրին Ժօրիս ըսաւ թէ ինք միայն Պօլսոյ մէջ ազատ կը տեսնէ Հայերը բայց սոյստեղ մայրաքաղաք մըն է զոր կարելի չէ բողոքատել ցաւաւորութեան հետ Գլուխը ինչպէս որ ըլլայ ոտքն ալ այնպէս կը ըլլայ ըսուեցաւ իրեն Ժօրիս պատասխանեց թէ ինք գաւառները չէ պտտած, Հարցուեցաւ թէ Պօլսոյ գալէ առաջ իմացած էր հայկական զէպքերը: Ժօրիս պատասխանեց թէ 1896 ին այսինքն Պանքայի զէպքին վրայ տեղեկութիւն ունէր: Հարցուեցաւ որ եւրոպայ գտնուած միջոցին իմացած էր թէ Հայ յեղափոխականները գործադրած են Պանքայի վրայ յարձակելու եղեւնական արարքը: Ժօրիս պատասխանեց որ այս մասին տեղեկութիւն չունէր, ինք անկեալ վիճակի մէջ գտաւ Հայերը, բայց տեսաւ որ անոնք Պօլսոյ մէջ չեն արհամարհուի Ըսուեցաւ իրեն որ քանի որ Պօլսոյ մէջ բան մը չէ տեսած, ուրեմն պէտք էր խոստովանել որ գաւառներն ալ այնպէս ըլլային, հետեւաբար իր յայտարարութիւնները իրարու հակասական են: Ասոր վրայ Ժօրիս խնդրէն շեղելով սկսաւ դարձեալ խօսիլ Մամուլի չափազանցեալ և անպատասխան իրաւարարութիւններու մասին: Նախադահը դարձեալ գիտել տուաւ որ Ժօրիս իբր պատմապէս պէտք էր գիտնար թէ Հայերը 700 տարիէ ի վեր Օսմ. պետութեան հովանիին տակ հանգիստ կապրին, ասոր ինչ ըսելիք ունի: Ժօրիս այս յայտարարութեանց անջեւ ըրեց:

Հարցաքննութիւնները շարունակուեցան և անգեկութիւն ուզուեցաւ թէ դժոխային մեքենան պարունակող և Սէլամըքի արարողութեան վայրը մըտցուած կտորը ինչպէս ձեռք բերուեցաւ, մաքսատունէն ինչպէս պէս, և որո՞ւ միջոցաւ հանուեցաւ, և ո՞վ չինցեց այն երկաթ սնտուկը, որուն մէջ դրուած էր դժոխային մեքենան: Ժօրիս պատասխանեց թէ այս կտորը ծովու ճամբով բերուեցաւ մաքսատուն, բայց չի գիտեր թէ ո՞վ հանեց զայն մաքսատունէն, ինք չը տեսաւ կտորը և չգիտեր թէ ո՞վ չինցեց երկաթ սնտուկը: Ըսուեցաւ իրեն որ հեռագիր մը ուղղած էր կտորին խնդրին վրայ Ժօրիս ըսաւ թէ գործարանին «ընէսման» պէտք էր Պօլսոյ զրկուէր, բայց սխալում մը առաջ եկաւ և այս առթիւ Պօլսոյն քաջած մէկ հեռագիրը իրեն թարգմանել տրուեցաւ: Հարցուեցաւ թէ

ո՞վ զրկեց մէջինիցը, և ինչ էր անոր քանակութիւնը: Ժօրիս ըսաւ թէ ինք 130—140 քիլօ մէջինից տեսաւ, զոր Սիլվիօ Րիչի իրեն յանձնեց պահուելու համար, բայց չի գիտեր թէ ո՞վ բերաւ զուրկու Հարցուեցաւ թէ այս քանիչը ինչի՞նք ինչո՞ւ բերուեցան եւ ինք որչափ մամանակ պահեց զանոնք իր տունը: Ժօրիս ըսաւ թէ այս պայթուցիկ նիւթերը բերուած էին յեղափոխական ընկերութեան եղեւնական զիտուներուն գործադրութեան իբր պատրաստութիւն: 7-8 ամիս եւ թերեւ մինչեւ տարի մը պահեց այս հրանիւթերը իր տան մէջ որոնք եթէ բռնկէին խիստ մեծ վտանգ առաջ պիտի բերէին: Իսկ եթէ չբռնկէին խիստ դիւրին էր գտնուել պահելը: Հարցուեցաւ իրեն թէ այս նիւթերուն բերուելէն առաջ խօսք բացուած էր իրեն Ժօրիս ըսաւ թէ «մէլիմի» բերուած ատեն յեղափոխականները յայտնեցին իրենց նպատակը եւ ինք համարժեք գտնուեցաւ իրեն որ չէր գիտեր թէ «մէլիմի» նիւթն պայթած ժամանակ իսկ մը տղաք եւ ուրիշ մարդիկ պիտի ոչնչանային եւ մարդասպանութիւնը վատութիւն մըն էր: Ժօրիս ըսաւ թէ իրենց նպատակը մարդիկ սպաննել չէր, Հարցուեցաւ իրեն թէ չէ՞ր գիտեր որ մարդ ալ պիտի մեռնի, Աստիկայ հիմայ գիտցայ, ըսաւ Ժօրիս, առաջ չէի գիտեր որ մարդ պիտի ոչնչանայ: Հարցուեցաւ թէ՞ պայթուցիկ նիւթերը Հայ յեղափոխականներուն ծառայելու համար հայթայթուեցան: Ժօրիս իբր թէ այդ կէտը ինք ալ հարցուցեր է եւ անոնք ալ պատասխանեցին թէ՞ իրենց նրպատանքն է մարդ ոչնչացնելը, բայց այս չէր գիտումը, այլ եղեւնական արարքը գործադրելու Ժօրիսի առաջարկուեցաւ Պօլսոյ եւ գաւառացի Հայոց մէջ եղած տարբերութիւնը որոշել: Պատասխանեց թէ մեծ տարբերութիւն մը չէ տեսած Պօլսոյ մէջ, Դիտել տրուեցաւ Ժօրիսի թէ օսմ գտարաններու եւ ուրիշ պաշտօնականներու մէջ քիչ տարբեր պաշտօնեաներ կան, մինչեւ վէճիքութեան աստիճանին եւ Նախարարի գիւլքին բարձրացած, թէ քրիստոնեաները կը պահպանեն իրենց լեզուն եւ ազգութիւնը, եւ կատարեալ սգաւորութեամբ ի գործ կը դնեն իրենց կրօնական պաշտամունքներն եւ առեւտրական գրադուսները, ասոր ինչ պիտի ըսէ: «Աստիկա ճիշդ է» պատասխանեց Ժօրիս: Նախադահը յարեց.— «Դուն ըսիր թէ Պիժիա գտնուած միջոցիկ կարգացած թերթերէն այն պէս համոզուած էիր թէ Հայերը օսմ երկիրներու մէջ անվայել արարքներու կ'ենթարկուին, մինչ հիմայ կը հաստատեն թէ Պօլսոյ մէջ անոնք կատարեալ հանգստութեամբ կայրին, այսինքն կը հաստատեն որ քու առջի համոզումիդ հակառակը գտած ես: Արդ, գաւառի մէջ ալ Հայերը հանգիստ չեն միմէն, Ժօրիս պնդեց թէ գաւառները Պօլսոյ պէս չեն:

(Շարունակելի)

**ԹԱՏԵՐԱԿԱՆ ԲՐՈՆԵԿ**

Պարագաններու յարմար բերմամբ անհրաժեշտ կուզեմ գտնալ քանի մը խօսք ընել պուլկարահայ գերասանական խումբերու արդի խայտառակ վիճակին համար:

Արդ, ինչպէս պիտե՞ք, մեր գաղթականութեան շնորհիւ պուլկարահայ հասարակութիւնը կրցած էր ունենալ իր մէջ ըստ բուսականի վարժ դերս, մէկ կամ երկու խումբ որոնք հանգուցեալ հոշակաւոր հայ գերասան պ. Թովմաս Գասուրեանի աշակերտներէն առաջ եկած ու կազմուած էր, ինչպէս օրինակի համար ամենուս ծանօթ է պ. Պապեանի խումբը որ ինք անցնելով պ. Գասուրեանի պուլկարահայութեան մէջ ձգած հետեւորդներուն զլուխը ու կազմած էր ըստ բուսականի կանոնաւոր գերասանական խումբ մը իր աստիճանորդութեան տակ, եւ կրցած է մրցել վերջին տարիներու յաջողակ ներկայացնել իր ներկայացուցիչը միշտ թաւաբասէր հասարակութեան համակրանք ու քաջալերութիւն չափելով:

Ինչպէս այսօր ցաւով կ'իմանանք վաւերապարտակ հայ հասարակութեան մէջ գտնուած քանի մը թատերասէր անձնաւորութիւններէ թէ՛ շատոնց ի վեր Պապեանի խումբը մասնուած է խղճալի վիճակի մը որ վերջին օրերու այլեւս չափազանց տկարանալով իր ներկայացմանց մէջ խոյս տուած է իր սէզունի մեծ մասը անցուցած վաւերաբաղա՞նք, այս լուսածններուն վրայ երբ հարցուցի այդ անձնաւորութեանց թէ՛ ինչ էր պատճառը, անոնք ալ պատասխանեցին թէ՛ միմիայն ինքն պ. Պապեանը վերջին տարիներու շեղելով իր ուղղութեանէն ասով մէկտեղ տեսակ տեսակ գնում գաղափորներու տէր ըլլալով ու նաեւ մինչեւ անգամ թոյլ գործիք դառնալով իր խումբին մէջ գտնուող տըկար արբանեակներուն այդպէսով իր կարեւորութիւնը կորսնցունելով պատճառ եղած է իր տրամախիբ խումբին քաջամարտը:

Այսուամենայնիւ թատերասէր պարոնները ինձ իմացուցին ցաւով թէ՛ պ. Պապեանի իր թուրքութեամբ պատճառ եղած է իր խումբին մէջ վերջին տարիներու եկող պուլկարահայ անձնաւոր դերասան ողբերգուարուեստային պ. Ծաւարչին եւ Տէր եւ Տիկին Յակոբեաններուն հեռացման որոնցմէ առաջինը այսօր կը գտնուի Սօփիա Հայ գերասանական խումբին մէջ, աստիճանորդութեան տակ յայնի մը, իսկ երկրորդները խումբ մը կազմելով դէս ու դէն յըջելէ յետոյ այսօր պարագայի բերմամբ վառնա կը գտնուի, որոնց առաջին ներկայացման ներկայ գտնուեցայ, եւ որոնց այդ գիշերուան թատերախաղը ՅԱՌՈՒՏ ստամէն էր: Թէեւ ներկայացումը յաջողանալու համար շատ աշխատանք թափուած կերեւար սակայն եւ այնպէս պիտի ցաւիմ ըսել թէ չի կրցուեցաւ գոնէ քիչ մը լաւ ներկայացնել միմիայն սատանայի գերը կատարող իր ցաւ քիչ մը լաւ կատարել սակայն այն ալ վերջին վարագոյրին իր խնդր ու խելար պրոպագանդները գէշ տպաւորութեան տակ ձգեց թատերասէրները, որոնք աւելորդաբանութիւններ էին, գալով Տիկին ողբերգուհի Յակոբեանի յուսացուածէն շատ պակասներ բրաւ որուն բուն պատճառը դիմացի մատուցուին դերը կատարող պ. Յակոբեանին էր: որը շափէ աւելի անկարող գտնուեցաւ իր գերը կատարելու: Ուստի պիտի առաջարկեմ պ. Յակոբեանին որ աշխատի միմիայն իր ստամբերու մէջ ունեցած հակառակորդութեան ճիշդ առաջ տանել, որուն մէջ մեծ յոռաշ-

ղիմութիւն կը խոստանայ ապագային եթէ իր դիմացիները կարեւոր դերասաններ լինին:

Դառնալով գրութեան բուն նպատակին հոգեւոր յայտարարել Պ. Պապեանին, պ. Ծաւարչին եւ Երբ եւ տիկին Յակոբեաններուն որ խոյս տան իրենց ունեցած արդի ճամբայ չեղալիք գրութեանէն ու ստանալով ընելով դէս ու դէն եղած չարախօսութիւնները քան իրարու քով ի սէր իրենց արուեստին ձեռք ձեռքի տան ու միանան կանոնաւոր խումբ մը կազմելով իրենց հետ գտնուած կարեւոր արբանեակներովը յուսալով որ միշտ պիտի քաջալերուին թատերասէր հասարակութեան, հակառակ պարագային սա գիտնան թող որ միշտ մեասուելով մէկտեղ ժողովուրդէն հրապարակաւ պիտի խայտառակուին:

Թէեւ ձեզ համար այս առաջարկը անկարելի է, բայց պէտք է կարելի ընէք անպատճառ պարոններ:

Թատերասէր մը

**ԱԶԳԱՅԻՆ ԲՐՈՆԵԿ**

ՇՈՒՄԼԱՅԻՆ եկած թղթակցութեան մը կը տեղեկանանք թէ Պօլսոյ Պատրիարքարանը, որ բեկանած էր տեղւոյն թաղականական նախորդ ընտրութիւնը, այս անգամ ընտրութեան նոր հրահանգ զրկած է:

Այս առթիւ ստացանք թէ Ա. Կարպետեան ստորագրութեամբ ընդարձակ Վոյ մը առ Շումլայցիս որուն կարեւոր մասերը ստորեւ կը գետեղենք:

«Աղէտաբեր անցեալին վերերեւումը արգիլելու եւ Շումլայի հայ համայնքին կրօնական ու կրթական հարցերը բազմացեալ բարձրութեան վրայ պահելու համար, պիտի խնդրէին անկեղծօրէն, որ անցեալի բոլոր անձնական ռիսկ ու անազնիւ հաշիւները մէկտեղ թողած՝ յանուն ազգային շահերու, ձեր ընտրութեան մէջ ազատ ու անկաշկանդ ըլլալը, չենթարկուելով արտաքին այնպիսի թելադրանքներու որոնց բազմակողմանի վնասը տեսաք վերջին հինգ տարիներու մէջ:

«Մի մտածէք որ ձեր ընտրելիները անուանական հարուստներ կամ սնամէջ ջոջեր ըլլան, ընտրելիներէն պահանջելի էական հարստութիւնը մտային ու բարոյական է, Տանք մեր ձայնն ու քուէն այնպիսի երթատասարդ ու կարող ուժերու, որոնք կարենան բազմացեալ յեղաշրջումը գործադրել մեր տեղական բոլոր հարցերուն մէջ... Ժամանակ մը Շումլայն նախանձիղ ու օրինակելի վիճակ մը ունէր, իսկ այսօր պուլկարահայ գաղութներու մէջ ան նսեմացուց իր համբաւը:

«Շումլայցիներ, այս երկրին մէջ թաղականութիւնը, մեզ համար միայն եկեղեցւոյ մատակարարութեան պաշտօնակութիւն մը չէ, այլ ազգապահպան ուժեղ ազգակ մը: Ուստի ընտրելու ենք այնպիսիներ որ կարողանան համապատասխանել այդ մեծ ու սրբազան կոչման:

— ԸՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ԼՐԱԲԵՐՑ ԹԵՐթէն կը տեղեկանանք թէ յիշեալ քաղաքին ազգ. իշխանութիւնը տեղւոյն մէջ Հայկական Որբանոց մը հիմնելու համար հանգանակութիւն մը բացած է, որուն արդիւնքը քիչ ժամանակի մէջ 15243 զրան եղեր է: Հանգանակութիւնը դեռ կը շարունակուի:

— ՌՈՒՍՃՈՒՔԷՆ մեզ կը տեղեկացնեն թէ «Ա.Ր.Ս.Ք.Ս» նուագախումբը մտադիր է Ջատիկի առթիւ մեր քաղաքը այցելել իր ծախսովը եւ ի նպաստ Վառնայի վարժարանին երեկոյթ մը սարքել :

Վառնայի ներուստը յարմար առիթ պիտի ըլլայ մտէն տեսնելու հաճոյքն ունենալ Ռուսոնոքի մէջ արդէն ոչ թէ միայն հայոց այլ եւ օտարներու շրջանակին մէջ, ծանօթ համբաւ ունեցող այս խումբը :

— ՇՈՒՄԼԱՅԷՆ մեր ստացած մէկ թղթակցութենէ մը, զոր յաջորդ թուով պիտի հրատարակենք, կը տեղեկանանք թէ տեղւոյն աղգային վարժարանը փակուէր է :

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

#### Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պարսկական դեսպանութիւնը նոր ծանուցագիր մը առած է Բ. Դրան, որով պարսկական երկրէ տաճիկ զինուորներու անմիջապէս ելնելը կը պնդէ: Մտնուցագիրին մէջ յիշատակուած է թէ՛ Բ. Դրանը իր տուած խոստումը չէ յարգած, և եթէ այս գրութիւնը տակաւին շարունակուի պատճառ պիտի լինի երկու կառավարութիւններու միջև եղած բարեկամական յարաբերութեանց մէկ անգամ ընդ միշտ խզուելուն: Պարսկա-խրքական միջադէպը արգելք կը հանդիսանայ թուրք և պարսիկ վաճառականական դաշնագրի ուշանալուն:

— Նախարարական խորհուրդը, ամսոյս 5-ին, հանքերու օրինաց մասին պատրաստուած մտազարթնանքի միջոցով ստորագրած է, այս կանոնագրի վերջնական պատճէնը յօրինուած էր անցած շաբաթ օր: Այս հարցին բարեօրոշումը, անգլիական դիւանագիտութեան համար յիշուի մեծ յաջողութիւն մ'է, ընդունուած է որ՝ եթէ տարուոյ մը ժամանակամիջոցին մէջ իրտտէն կամ ֆերմանը չընէ, որով կը հաստատուի մենաշնորհումը, մենաշնորհապահանջը, որ աղբրագիր տուած է, կրնայ հաշուել մենաշնորհումը գործնականապէս իրեն տրուած:

— Պէքօ տը Բարի\* լրագրի թղթակցիցը Պոլսոյ պարսիկ դեսպան Միրզա Րիզա խանին շատ մօտիկ անձնաւորութեան մը հետ տեսակցութիւն ունեցած է, Միրզա խանը կըսէ եղբր թէ, պարսկա-թրքական միջադէպը յայտարարուելու վրայ է:

— Մակեդոնիոյ մէջ գտնուած Աւստրո-Հունգարական հիւպատոսներու ուղարկած տեղեկագիրները, սերպ լրագրիներու ասարձայնութիւնները կը հերքեն, այս վերջիններս կը պնդեն թէ՛ ժողովուրդը ապստամբելու է՝ և Նովի Բազարին կը սպառ-

նայ: Այն յիշուի է թէ՛ հարկերու հաւաքումը, ստիճան մը դժգոհութիւն պատճառած է քրիստոնեայ բնակչութեան, սակայն ո և է ապստամբական շարժում չը նշմարուի, Իոյն իսկ վախ ալ չկայ՝ թէ կրնայ ըլլալ Ստոյգ չէ այն լուրը, որով կը հաւաստէին թէ՛ Իրէքի մէջ զինուորներու ու ժողովուրդին միջև ընդհարում տեղի ունեցած է:

— Մակեդոնիոյ մէջ յոյն հրոսակախմբերը կը շարունակեն իրենց շահատակութիւնները, ուսմանական կառավարութիւնը այս մասին խիստ զիմուսներ ըրած է Բ. Դրան, պահանջ կը դնէ օր առաջ այս շահատակութիւններու առաջը անել: Ռուսնա մուշական հարցը հետզհետէ լուրջ կերպարանք ձը կ'առնէ:

#### Ռ Ո Ւ Ս Ի Ա

Անգլիական լրագրիներուն Օտէսայէն կիմացնեն թէ՛ Սեւ Մովու նաւատորմի Նաւաստիներու մէջ դարձեալ ապստամբութիւն ծագած է: Յարը հրաման ըրած է մօտակայ նահանգներէն շուտով հարիւր հազար զինուոր Օտեսա ու Սեւաստաբօլ ուղարկել, ապստամբած նաւաստիները զըսպելու համար:

— Սեւաստաբօլէն կիմացնեն թէ՛ ծովակալ Զուհինը մերժած է տեղակալ Շմիտի վերաքննիչ ատեսանին ուղղած աղբրագիրը, նա պահանջած է առջի ատեսանին արձակած վճար իրագործումը: Տեղակալ Շմիտը և իր երեք ընկերները Օչագովի մէջ հրացանի բռնուած են:

— Սեւաստաբօլի մէջ ծագած նոր ապստամբութիւնը հետզհետէ լուրջ կերպարանք կ'առնէ, քաղաքին բնակչութիւնը անհանգստութեան մատնուած է:

— Զինուորական նախարարութեան ուղղուած կայսերական հրամանագիր մը՝ զինուորագրութիւնը հետեւակազօրի համար 3 տարուան, իսկ այլապէս կարգերու համար 4 տարուան կիջեցնէ:

— Օտեսայէն կիմացնեն թէ՛ ոստիկանական պաշտօնէութեան ներքեւ գտնուող կրպակի մը մէջ դժոխային մեքենայ մը պայթած է, նոյն պահուն փողոցէն անցնողներէն 10 հոգի ծանրապէս վիրաւորուած են:

— Ամսոյս 6-ին Մոսկովայէն կիմացնեն թէ՛ լաւ զինուած 20 մարդիկ «փոխադարձավարձ» ընկերութեան գործատեղին մտեր են: Այս մարդիկ պահին տեսուչը կըստիպեն որ դրամարկիին բանալիները իրենց տայ, կառնեն բանալիները կերթան կը բանան արկղամուրը, ութը հարիւր հազար ուսկի չափ գու-

մար մը կը վերցնեն, և սմենայն հանդարտութեամբ կը հեռանան:

— Բեթերսպուրկէն «Էշանժ» թղթակցից լրագրին կը հաղորդեն թէ՛ Խարզովի նահանգին մէջ 17000 գործաւորներ վերատին ապստամբեր են: Խարզովի թիւնը վերահաստատելու համար զօրք զրկուած է:

— Ներքին խռովութիւնները հանդարտեցնելու ժամանակ մեռած սպաններու և զինուորներու զաւակներուն օգնութեան հասնելու համար կառավարական խորհուրդը տնօրինութիւններ ըրած է: Զինուորական նախարարութիւնը բացայայտելով կը սէ թէ՛ այս վերջիններս այժմ բռնական պատերազմին մէջ մեռած սպաններու և զինուորներու ընտանիքներու նման համահասար իրաւունք կը վայելեն:

#### ՅՐԱՆՍԱ

Հանքային գործաւորներու համաժողովը հրէկ վճարեց ընդհանուր գործադուլ յայտարարել:

Գործաժողովներու թիւը հիւսիսային և բարե Գալէի հանքերու մէջ ամսոյս 9-ին 80000 հոգի կը յանգի: Ետ հաւանական է որ գործադուլը Լոարի հանքերու մէջ ալ տարածուի, ուր քանի մը մետաղագործ գործաւորները արգէն գործաժողով ըրած են:

#### ԱՆԳԼԻԱ

Կօզի իշխանը և իր կողակիցը Հնդկաստանի մէջ իրենց ճանապարհորդութիւնը աւարտած են: Անոնք ամսոյս 6-ին Գալիէն դէպի Եգիպտոս մեկնած են, կը կարծուի թէ Էսուարտ թաղաւորը և թագուհին, Միչերկրականի միջև ըրած նաւազբօսումի ժամանակ, պիտի գտնան եւ գահաժառանգը և իր կողակիցը դիմաւորել:

— Երբեմնի նախարարացեալ Պալիուրի առողջապահական կացութիւնը, իր մերձաւորներուն բաւական մտատանջութիւն կը պատճառէ: Կը հաւաստեն թէ՛ Զատիկական տօներու սոթիւ բաւական երկարատեւ արձակուրդ ըր առնելու է:

— Պէրլինէն քաջուած հեռագիրները կը հաւաստեն թէ՛ մօտ օրէն Անգլիոյ թագաւորը Զերնակօրայի իշխանին այցելութեան կերթայ: Այս հեռագիրները միանգամայն կը յաւելուն թէ՛ երկու վեհապետներու տեսակցութիւնը, նպատակ մ'ալ ունի, այսինքն իտալո-պալեանեան նիդակացութեան մը հովանաւորումը Անգլիոյ կողմէն:

#### Գ Ե Ր Մ Ա Ն Ի Ա

Գերմանական քանի մը բանակներ զինուորուած են նոր կատարելագործուած արագա-

հարուածեան թնդանօթնիւրով: Գերմանական բոլոր թնդանօթանիգ բանակը այս թնդանօթնիւրով պիտի չլինուի:

Իոյնպէս հետեւակազօր պիտի զինուի նորատիպ հրացաններով, սոյն հրացաններով արդէն քանի մը զօրագնդեր զինուորուած են: Այս երկու նորատիպ հրացաններով վերջնականապէս պիտի զինուի գերմանական բանակը, երեսփոխանութեան այս մասին հարկն ըզած վարկը բանալէն անմիջապէս ետքը: Այս նորատիպ հրացանները գերմանական բանակին պատկառանքը կը բազմապատկեն:

— Պրանական զինուորական նախարարութիւնը պատերազմի ժամանակ որպէս օգտուէտ ընդունած էր զեկաւորեալ օգապարիկը: Պրանական նախարարութեան այս որոշումը, ստիպած է զբրմանական կառավարութիւնը նոյնը իր բանակին համար հայթայթել: Այս իսկ նպատակով Պէրլինեան կառավարութիւնը միլիթօնատեր շորս վաճառականներու գիմած է: այս անձինք 1 միլիթօն մարք տալու են առաջին փորձի ծախսերուն համար: Փորձերը մասնագէտներու կողմէ պիտի ըլլան: Օգապարիկը որ շինուելու է ամենալաւ նիւթէ, փորձերէն վերջը կառավարութենէ պիտի գնուի բանակին համար:

#### ՄԱՐՈՒՔ

Հոռոմէն Պէքօ տը Բարի\* լրագրին քաջուած հեռագիր մը կը հաւաստէ թէ՛ Գերմանիան Պրանսայէն պահանջած է, Մարոքեան պանդի ու ոստիկանութեան մասին ընելիք առաջարկները ամենքը մէկէն առաջ բերել: «Դրպուլ» լրագրի միջնադարսի թղթակցին համաձայն, կոմս Թաթենպախը կը կարծէ եղբր թէ՛ Պրանսիան այս պահանջին գոհունակութեամբ պատասխանելու է: Ասկէ զատ Լոմս Թաթենպախը յայտարարած է թէ՛ շուտով ամէն բան վերջ կը գտնէ, և գէպի ներկայ շաբթոյս վերջերը համաժողովը կը փակուի:

#### ՃԱՌՕՆԻԱ

Լուր կը շրջի թէ՛ Լոնտօնի ճարտիտի դեսպան, գերկոմս Հայաշին, արաքի գործոց նախարար պիտի ըլլայ:

— Սարսափելի երկրաշարժ մը եղած է Պորտուգալ կղզիին մէջ: Տագիտ, Բէյլիգո և Շիուգո քաղաքները բոլորովին կործաներ են, 8000 հոգի մեռած կայ: Նիւթական ֆլաւաները 175 միլիթօն ֆրանքի կը յանգին:

— Լամտերֆը, Բեթերսպուրկի, ճարտական նորակարգ դեսպան Մոզոնսի ի պատիւ փառաւոր ճաշկերոյթ մը տուած է: